9787

1920

334.5(47.925)
Z-24

2010

«ՄԻՈՒԹԻՒՆՔ ՕՑԺ Լ»

(15)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՕՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ
(ՀԱՅԿՈՕՊ)

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Փոփոխուած եւ լրացուած 1919 թ. նոյեմբերի գագաթնաժողովի կողմից)

Գինն է 10 ռուբլի

334.5(47.925)
Հ-24

1920
Տպարան Սպա-Ցեղ. Գուլտուրայի
Երեւան

Հ 007

7969-42
334.5 (47-925)
Հ-24

«ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՅԺ Է»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՕՕՊԵՐԱՏԻՒՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ (ՀԱՅԿՕՕՊ) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ,

II հրատարակութիւն

(փոփոխուած եւ լրացուած 1919 թ. յուլիսի 2-3-ին ներկայացուցչական ժողովի կողմից):

26806

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Միութիւնը նպատակ ունի աջակցել, որ տարածուն բարեկամութեան ու կարգի օգուտները սպառման և տանը գործածելի պիտոյքների փոխանակման ու արտադրութեան գործում, նոյնպէս նպատակ, որ մշտական յարաբերութիւններ ստեղծուին Հայաստանի կօօպերատիւների մէջ, ուղիղ ընթացք տալ նրանց գործերին ու զարգացման, կազմակերպել նրանց միատեսակ գործունէութիւնը, որ պէտք է նպատակ ունենայ կարելոյն չափ յաջող ձեւով իրականացնելու իր անդամների տնտեսական և հոգեկան բարեկեցութիւնը:

§ 2. § 1-ում ցոյց տուած նպատակներին հասնելու համար միութիւնը վերապահում է ա) քննել ու լուծել այն հարցերը, որոնք կատաղմանն կօօպերատիւների կեանքում, բ) ծողովել և հրատարակել մամուլի միջոցով կօօպերատիւների և նրանց միութիւնների գործունէութեան վերաբերեալ տեղեկութիւններ, կատարել ամեն տեսակի հետազօտութիւններ, նոյնպէս լոյս ընծայել պարբերական և այլ հրատարակութիւններ, գ) խնդրամատոյց լինել կառավարական և հասարակական հիմնարկութիւններին կօօպերատիւների ու նրանց միութիւնների կեանքից բղխող պահանջների վերաբերեալ, դ) կազմակերպել դասախօսութիւններ, ընթերցանութիւններ, զրոյցներ, ցուցահանդէսներ, կազմել խորհրդակցութիւններ, կօօպերատիւների և նրանց միութիւնների վերաբերուող հարցերի շուրջը. ե) հիմնել օժանդակող դրամարկղներ, բնալուծման (անալիտիքական) կայարաններ, նմուշների և այլ իրերի թանգարաններ, գրադարաններ և նոյնպէս ուրիշ հանրօգուտ հիմնարկութիւններ. զ) նպաստել կօօպերատիւներին, տեղեկութիւնների

խորհուրդների, ցուցմունքների և իրաւաբանական օգնութեան միջոցով. է) կատարել միութեանը անդամագրուած կօոպերատիւների մէջ պարբերական և յանկարծակի քննութիւններ. ը) աջակցել հիմնարկութիւններին և անձնաւորութիւններին կօոպերատիւներ կազմակերպելու գործում. թ) աջակցել կօոպերատիւներին՝ ծառայողներ գտնելու, կազմել վարձման բիւրօ և կազել միութեան և առանձին ընկերութիւնների անունից, նրանց յանձնարարութեամբ, համաձայնութիւն ծառայողների հետ վարձման վերաբերեալ. ժ) առանձին ընկերութիւնների համար գտնել շրջանառութեան միջոցներ, նոյնպէս տալ այդ միջոցները հնարաւորութեան դէպքում իր հաշուին, նպաստել ընկերութիւններին ապրանքներ գնելու, կազմակերպել նրանց միասնական գնումները, գնել իր հաշուին, ընդունել յանձնարարութեան հիմքերով և վաճառել ամեն տեսակի ապրանքներ ներկայացուցչական ժողովի հաստատած հիմունքներով՝ թէ կանխիկ և թէ ապառիկ. ժա) հաստատել սեփական հիմնարկութիւններ, պահեստներ, հիմնարկութիւնների բաժանմունքներ՝ ապրանքներ արդիւնաբերելու, պատրաստելու, գնելու և վաճառելու համար. ժբ) պահել սեփական գործակալութիւններ և գրասենեակներ Հայաստանում և արտասահմանում ապրանքների գնման և վաճառման համար. ժգ) յանձն առնել ընդունել միջնորդութիւն և գործակալութիւն ապահովագրման և փոխադրման բոլոր տեսակների վերաբերեալ, կազմակերպել նաև կօոպերատիւների համար փոխադարձ ապահովագրումն. ժդ) համաձայնութեան գալ միւս միութիւնների և առանձին ընկերութիւնների հետ այլևայլ գործողութիւնների վերաբերեալ. ժե) կատարել միութեան անդամներին կանոնադրութեամբ վերապահուած բոլոր գործողութիւնները. ժզ) կատարել առհասարակ կօոպերատիւ գործի զարգացման նպաստող ամեն տեսակի գործողութիւններ։

§ 3. Միութիւնը իրաւունք ունի բոլոր օրինական միջոցներով ձեռք բերել, գրաւ դնել և օտարացնել ամեն տեսակի շարժական և անշարժ կայքեր, կնքել փոխառութիւններ, ընդունել աւանսներ, տալ, ընդունել մուրհակներ և զեղջել նրա՝ց, փոխադրական մակագրութիւններ կատարել մուրհակների վրայ և առհասարակ մտնել պարտաւորագրութիւնների մէջ ու կազմել պարտաւորագրութիւններ, որոնց թւում և կառուցման իրաւունքի վերաբերեալ, ընդունել նեբրատութիւններ ու ժառանգել կտակների հիման վրայ, առաջադրել պահանջ և պատասխանել դատարանում։

§ 4. Պարտաւորագրութիւնների հանդէպ միութիւնը պատասխանատու է իր դրամագլխով և կայքով և բացի այդ իր անդամ կօոպերատիւների հրնդապատիկ պարտադիր բաժնեվճարներով։ (§ § 11 և 12).

§ 5. Միութիւնն իրաւունք ունի անդամագրուել իր նպատակներին համապատասխան ուրիշ միութիւններին, ընկերութիւններին և հիմնարկութիւններին,

§ 6. Միութիւնը իր գործունէութեան ընթացքում ղեկավարւում է ներկայ կանոնադրութեամբ և ենթարկւում է գոյութիւն ունեցող բոլոր օրէնքներին։

§ 7. Միութիւնը ունի կնիք, իր անունով։

§ 8. Միութեան վարչութիւնը գտնւում է Երևանում։

II. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 9. Միութեան անդամ կարող են լինել կօոպերատիւները ու նրանց միութիւնները։

Ծանօթ. Միութեան աջակցութիւնից կարող են օգտուել և Միութեանը չանդամագրուած կօոպերատիւները, զեմստվային գիւղատնտեսական ընկերութիւնները, տնայնագործական արտէլները, և բարեգործական ընկերութիւնները, խորհրդի և վարչութեան մշակած յատուկ կանոնների։

§ 10. Միութեան անդամագրուել ցանկացող կօոպերատիւը կամ այլ հիմնարկութիւնը (§ 9) ներկայացնում է Միութեան վարչութեան համապատասխան գրաւոր դիմում։ Այդ գրութեան մէջ պէտք է մատնանշի, որ ընկերութիւնը ենթարկւում է այս կանոնադրութեան բոլոր որոշումներին և յանձն է առնում միութեան բոլոր գործերի վերաբերեալ պատասխանատուութիւնը, սոյն կանոնադրութեան հիման վրայ։ Այս գրաւոր դիմումին պէտք է կցւեն ընկերութեան կանոնադրութեան մի օրինակը, ընդհանուր ժողովի միութեան մէջ մտնելու որոշման պատճէնը և վերջին հաշուետուութեան տեղեկութիւնները, ընկերութեան կամ այլ հիմնարկութեան վերաբերեալ։

§ 11. Կօոպերատիւը կամ այլ հիմնարկութիւնը մտցնում է Միութեան վարչութեան կողմից միութեան անդամների ցուցակը համաձայն կանոնադրութեան § 10 և 12-ում ցոյց տուած պահանջների, ըստ որում նա մտցնում է Միութեան դրամարկղը իր սեփական բաժնային և պահեստի դրամագլխի երեք տոկոսը իրրև մուտքի վճար։

§ 12. Իւրաքանչիւր բաժնի արժէքը որոշւում է 1000 ռուբլի, որը մտցւում է միանգամ կամ մաս առ մաս, եթէ միայն հրամանագրական բաժինը անհրաժեշտ դանի։

Այն ընկերութիւնները, որոնք ունեն 300 անդամ, պարտաւոր են մտցնել մի բաժնի արժէք, 300-ից մինչև 500 անդամ ունեցողները 2 բաժնի, 500-ից մինչև 700 անդամ ունեցող՝ 3 բաժնի և այսպէս շարունակաբար ամեն մի 200 անդամին մի բաժնի արժէք։

§ 12¹. Անդամագրւող միութիւնները մուտքի վճար տալիս են բաժնային դրամագլխի մի տոկոսը, իսկ որպէս բաժին մինչև 10 անդամ ունեցողը մտցնում է 5 բաժնի արժէք, 10-ից մինչև 13-ը մտցնում է 6 բաժնի արժէք և այսպէս իւրաքանչիւր 3 անդամագրուած կօոպերատիւի համար տալիս է մի բաժնի արժէք։

§ 13. Միութեան անդամները մասնակցում են նրա բոլոր գործերին իրենց ներկայացուցիչների այն թւի միջոցով, որը ցոյց է տրուած § 29.

§ 14. Միութեան իւրաքանչիւր անդամ պարտաւոր է՝ ա) ենթարկուել ներկայացուցչական ժողովի բոլոր որոշումներին, որոնք հիմնուած կլինեն օրէնքի և ներկայ կանոնադրութեան վրայ. բ) ըստ հնարաւորութեան բաւարարել բոլոր կարիքները Միութեան միջոցներով. գ) մտցնել իւրաքանչիւր

տարի դրամարկղը ներկայացուցիչների ժողովի կողմից սահմանած պարտաւորեցուցիչ վճարները. գ) իւրաքանչիւր տարի ներկայացնել իր գործունէութեան հաշուետուութիւնը. ե) ներկայացնել Միութեան վարչութեան և վարչութեան կողմից լիազօրուած անձնաւորութիւններին իր բոլոր գրքերը և վաւերաթղթերը. զ) գումարել իրենց անդամների արտակարգ ընդհանուր ժողովներ, միութեան առաջարկները քննելու համար, եթէ Միութեան վարչութիւնը այդպիսի գումարումն անհրաժեշտ կդտնի. է) տեղեկացնել Միութեան վարչութեան՝ կանոնադրութեան և վարչութեան կազմի իւրաքանչիւր փոփոխման մասին և պատասխանել իր ժամանակին ու ճշտութեամբ բոլոր հարցումներին։

§ 15. Միութեան իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի ի միջի այլոց՝ ա) օգտուել միութեան բոլոր հիմնարկութիւններից՝ ներկայացուցիչների ժողովի կողմից հաստատուած հիմունքներով. բ) ներկայացուցիչների ժողովի կողմից հաստատուած հիմունքներով օգտուել անհրաժեշտ յուցմունքներից, քննիչների, հրահանգիչների և Միութեան վարչութեան ու նրան ենթակայ մարմինների օժանդակութիւնից. գ) մտցնել գրաւոր առաջարկներ վարչութեան և միութեան այլ մարմինների գործունէութեան վերաբերեալ և պահանջել այդ առաջարկութիւնների քննութիւնը միութեան վարչութեան և նոյնպէս ներկայացուցիչների ժողովի կողմից։

§ 16. Միութեան իւրաքանչիւր անդամ պատասխանատու է Միութեան ընտանների վերաբերեալ, իսկ անանկութեան դէպքում, Միութեան պարտաւորագրութիւնների վերաբերեալ՝ իրենց պարտաւորեցուցիչ բաժինների գումարի տասնապատիկ չափով։

§ 17. Միութեան անդամը կարող է Միութեան կազմից դուրս գալ գրաւոր դիմումով, հիմնուած ընդհանուր ժողովի որոշման վրայ, սակայն ոչ շուտ քան ընթացիկ տարւայ վերջը, և այն պայմանով, եթէ յիշատակուած դիմումը ներկայացուած է ոչ ուշ քան վեց ամսւայ ժամանակամիջոցում, մինչև ընթացիկ գործողութիւնների տարւայ վերջը, հակառակ դէպքում ընկերութիւնից անդամը կարող է դուրս գալ միայն գործողութիւնների հեռանալ տարին լրանալուց յետոյ։ Միութիւնից անդամի դուրս գալու օրը հաշուում է գործողութիւնների տարւայ վերջին օրը։

§ 18. Ներկայացուցիչների ժողովի որոշմամբ կարող են արտաքսուել Միութեան կազմից այն անդամները, որոնք չեն իրագործում իրենց և Միութեան կանոնադրութիւնները և խախտում են իրենց պարտաւորագրութիւնները Միութեան առաջ կամ գործում են պարզօրէն ի վնաս նրան։

Միութեան անդամը հաշուում է Միութիւնից հեռացած այն օրուանից, երբ արտաքսման մասին կայանում է որոշում ներկայացուցիչների ժողովի կողմից։

Միութիւնից հեռացած, արտաքսուած անդամը կարող է պատասխանատուութեան ենթարկուել մի տարւայ ընթացքում միայն Միութեան այն վնասների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել և պարզուել են մինչև Միութեան այն տարւայ գործողութիւնների հաշուետուութեան հաստատելը, որի ընթացքում նա հեռացել է։ Միութեան գործերի յօժարակամ կամ ստիպողական դադարեցման դէպքում, անդամների պատասխանատուութիւնը իրենց գործերի նկատմամբ, եթէ նրանք դեռ չեն ուսարուել, տեւում է մինչև նրանց լուծումը։

§ 19. Միութիւնից թէ յօժարակամ հեռացած և թէ արտաքսուած անդամներին, իրենց մացրած բաժնի գումարները, հանդերձ գնած ապրանքի պրեմիայով, վերադարձուում է վարչութեան ներկայացրած դիմումի հիման վրայ երեք ամսւայ ժամանակամիջոցում հաշուետարւայ գործողութիւնների հաստատումից յետոյ ներկայացուցիչների ժողովի կողմից, ըստ որում պահանջւում է, որ հեռացող անդամը կանխօրէն փակէ իր բոլոր հաշիւները Միութեան հետ։ Ինչպէս կամովին հեռացող, նոյնպէս Միութիւնից արտաքսուած անդամը իրաւունք չունի Միութեան դրամագլխի որևէ բաժնի վերաբերեալ, բացի իր բաժիններից։

§ 20. Միութիւնից դուրս եկած անդամը, կարող է նորից ընդունուիլ խորհրդի և վարչութեան յատուկ որոշմամբ։

III. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 21. Միութեան միջոցները կազմուում են դրամագլխից 1) հիմնական, որը ստորաբաժանուում է ա) բաժնեվճարների և բ) սեփական. 2) պահեստի և 3) յատուկ (որոշ նպատակով կազմած)։

§ 22. Սեփական հիմնական դրամագլուխը կազմուում է մուտքի վճարներից և իւրաքանչիւր տարւայ օգուտներից, որի համար յատկացուում է ոչ պակաս քան 10%։ Սեփական հիմնական դրամագլուխը նշանակուում է անշարժ, նոյնպէս և այլ կայք ձեռք բերելու, սակայն ներկայացուցիչների ժողովի որոշմամբ կարող է դրուել Միութեան շրջանառութեան մէջ։

§ 23. Բաժնեվճարներից գոյացած դրամագլուխը կազմում է Միութեան անդամագրած ընկերութիւնների և հիմնարկութիւնների պարտաւորեցուցիչ և կամաւոր բաժիններից։

§ 24. Միութիւնը իր միջոցները ուժեղացնելու նպատակով կարող է կնքել երկարատև և կարճատև փոխառութիւններ, ինչպէս և վարկ ստեղծել մասնաւոր անձանց մօտ, ընդունել աւանդներ այն չափերով ու պայմաններով, որ կորոշէ ներկայացուցիչների ժողովը։

§ 25. Պահեստի դրամագլուխը կազմուում է Միութեան մաքուր օգուտի իւրաքանչիւր տարւայ յատկացումներից, ոչ պակաս քան 20%, պատահական մուտքերից և պահեստի դրամագլխի տոկոսներից. պահեստի դրամագլուխը նպատակ ունի ծածկել այն վնասները, որոնք կարող են առաջ գալ Միութեան գործողութիւններից։

§ 26. Պահեստի դրամագլխի ծախսումը համաձայն իր նշանակութեան (§ 25) կատարուում է միայն ներկայացուցիչների ժողովի որոշմամբ։

§ 27. Միութիւնը կարող է նւիրատուութիւններից, անդամների կամաւոր վճարներից և օգտի որոշ յատկացումներից կազմել առանձին դրամագլուխ՝ տնտեսական, լուսաւորական, բարեգործական և յատուկ կարիքների համար գործադրելու նպատակով։

IV. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§ 28. Միութեան գործերի կառավարումը յանձնւում է ա) Ներկայացուցիչների ժողովին, բ) Խորհրդին և գ) Վարչութեան։

Ա.) Ներկայացուցիչների ժողովը։

§ 29. Ներկայացուցիչների ժողովները լինում են ա) տարեկան, որը վարչութիւնը հրաւիրում է հաշուետուութեան, նախահաշուի, Միութեան գործունէութեան նախագծի և այլ հարցերի քննութեան համար, ըստ որում անցած տարւայ հաշուետուութիւնը քննելու համար վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր տարի հրաւիրել հերթական տարեկան ժողով, ոչ ուշ ապրիլ ամսից. բ) Արտակարգ, որը հրաւիրում է վարչութեան կամ նրան յայտնած խորհրդի, վերաքննիչ յանձնաժողովի և կամ Միութեան անդամների մի տասն երրորդի պահանջով։

Ծանօթութիւն.—Վարչութիւնը պարտաւոր է գումարել ներկայացուցիչների ժողով, երկու շաբաթւայ ընթացքում, հաշուած այդպիսին պահանջը ստացուած օրից։ Այդ պայմանը չկատարելու դէպքում ժողովը գումարւում է խորհրդի կամ վերաքննիչ յանձնաժողովի հրաւէրով։

§ 30. Ներկայացուցիչների ժողովը կազմւում է ներկայացուցիչներից (§ 9), որոնք ընտրւում են Միութեան անդամ կօօպերատիւներից։ Միութեան անդամ եղող իւրաքանչիւր կօօպերատիւ կամ այլ հիմնարկութիւն որը ունի մինչև 200 անդամ, ուղարկում է վճռական ձայնի իրաւունքով մի ներկայացուցիչ, 200-ից—500 անդամ ունեցողը—երեք. կօօպերատիւը կարող է նոյնպէս ընտրել ներկայացուցիչների համար անձնափոխանորդներ, որոնք մասնակցում են ժողովին ներկայացուցչի իրաւունքով՝ վերջինիս բացակայութեան դէպքում։

Ծանօթութիւն I.—Անդամ միութիւնները տալիս են ներկայացուցիչներ իրենց անդամագրած կօօպերատիւ անդամների թւի համեմատ (§ 30) զրանից բացի մի մի ներկայացուցիչ էլ ուղարկում են գաւառական միութիւնների վարչութիւնները։

Ծանօթութիւն II.—Իւրաքանչիւր ներկայացուցիչ ունի միմիայն մէկ ձայն։ Ձայնի իրաւունքը ոչ ոքի չի կարելի յանձնել։

§ 31. Վարչութեան և Խորհրդի անդամները ընդհանրապէս մասնակցում են ներկայացուցչական ժողովին խորհրդակցական ձայնով։ Մէկական ներկայացուցիչներ այդ մարմիններից օգտւում են վճռական ձայնի իրաւունքով, որից սակայն չեն օգտւում հետևեալ դէպքերում. 1) հաշուետուութեան հաստատման, մաքուր օգուտի գումարի որոշման ու բաշխման 2) վարչութեան և Խորհրդի անդամների գործունէութեան գնահատման ու նրանց վարձատրութեան գումարի սահմանման և 3) նրանց դատաստանական պատասխանատուութեան ենթարկման։

§ 32. Ներկայացուցչական ժողովի անմիջական որոշման ենթակայ են. ա) Միութեան գործունէութեան նախագծի քննութիւնն ու հաստատումը և եկամուտների ու ծախսերի նախահաշիւը։

բ) Վարչութեան Խորհրդի և վերաստուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնը և նրանց թւի որոշումը §§ 42, 43 և 36 սահմաններում։

գ) Փոխառութիւններ կնքելու և աւանդներ ընդունելու պայմանների որոշումը։

դ) Բէյարկումն նախահաշուի այն առաւելագոյն գումարի, որի սահմաններում վարչութեանը խորհրդի համաձայնութեամբ՝ լիազօրութիւն է տրւում անշարժ կայք ձեռք բերելու և դնելու։

ե) Վարչութեան հաշուետուութիւնների քննութիւնը, հաստատումն ու օգուտների բաշխումն։

զ) Միութեան անդամագրուած կօօպերատիւներին վարկաւորելու ու նրանց գործունէութիւնը քննութեան ենթարկելու ընդհանուր կանոնների հաստատումն։

է) Առանձին յատուկ դրամագլուխ կազմելու և առնասարակ միութեան բոլոր գործողութիւններին վերաբերող ցուցմունքների և կանոնների քննութիւնն ու հաստատումը այն դէպքում, երբ կանոնադրութեան մէջ որոշած չէ դրա կարգը։

ը) Ներկայացուցիչների ժողովին ներկայացրած Վարչութեան, Խորհրդին և Վերաքննիչ յանձնաժողովին վերաբերող գանգատների լուծումը։

թ) Վարչութեան, Խորհրդի և վերաքննիչ յանձնաժողովի անդամներին սխալ գործողութիւնների և զանցառութիւնների պատասխանատուութեան ենթարկելու հարցի լուծումն։

ժ) Անդամներին միութիւնից հեռացնելու խնդիրը։

ժա) Կանոնադրութեան փոփոխումն և լրացումն։

ժբ) Միութեան լուծման հարցի որոշումը։

ժգ) Ներկայացուցիչների ժողովի որոշումներից և ներկայ կանոնադրութիւնից բղխող հարցերի քննութիւնը և լուծումը։

§ 33. Ներկայացուցիչների գումարման կարգը կարող է հաստատել ներկայացուցիչների ժողովում, սակայն յամենայն դէպս միութեան անդամներին առնւազն մի շաբաթ առաջ պէտք է տեղեկացնի ներկայացուցչական ժողովի գումարման տեղի և օրակարգի մասին։

§ 34. Ներկայացուցչական ժողովում պէտք է քննւեն այն հարցերը, որոնք բղխում են ներկայ կանոնադրութիւնից։ Իւրաքանչիւր ժողովում քննւում են միայն օրակարգում կամ նրա լրացուցիչ թերթիկում մատնանշած հարցերը։ Ժողովի ընդունած որոշումները պարտաւորեցուցիչ են Միութեան իւրաքանչիւր անդամի համար, նոյնիսկ այն դէպքում, եթէ ժողովից բացակայել են նրա ներկայացուցիչները։

§ 35. Ներկայացուցչական ժողովը կայացած է համարւում, երբ ներկայ են գտնւում ոչ պակաս քան մի մի ներկայացուցիչ Միութեան անդամների մի հինգերորդ մասի կողմից՝ չհաշուած Միութեան վարչական մարմինների անդամներին։

§ 36. Եթէ ներկայացուցչական ժողովը չը կայանայ § 35-ում ցոյց

ուած անդամների թի բացակայութեան պատճառով, նշանակւում է օր ուր, քան երկու շաբաթաց ընթացքում երկրորդ ժողովը, որը կայացած է համարւում անկախ ներկայացուցիչների թի քանակից։ Այդ մասին միութեան վարչութիւնը պարտաւոր է նախազգուշացնել միութեան անդամներին երկրորդ ժողովի հրաւիրագրում։ Այդպիսի երկրորդ ժողովում կարող են քննել միայն այն հարցերը, որոնք մտցրած են եղել օրակարգը։

§ 37. Ժողովը բացւում է վարչութեան անդամի կողմից։ Ներկայացուցչական ժողովը ընտրում է իր համար նախագահ և քարտուղար։ Ներկայացուցչական ժողովին նախագահ չի կարող ընտրուել վարչութեան, խորհրդի, վերատեսչիչ յանձնաժողովի անդամը և միութեան ծառայողը։

Խորհրդի կամ վերատեսչիչ յանձնաժողովի կողմից ներկայացուցչական ժողով գումարելու դէպքում՝ վերջինս բաց է անում նրանց նախագահը ըստ պատկանելոյն։

§ 38. Միութեան կողմից անդամներ արտաքսելու, կանոնադրութեան լրացման կամ փոփոխութեան, միութեան գործերի լուծման հարցերը վճռելու համար, պահանջւում է միութեան բոլոր անդամների ոչ պակաս, քան կէսի ներկայութիւնը։

§ 39. Ժողովում գաղտնի քուէարկութեամբ են կատարւում պաշտօնակատար անձանց ընտրութիւնները և Միութեան վարչական կազմի վարձատրութեան, պաշտօնակատար անձանց պատասխանատուութեան ու ժամանակամիջոցից առաջ հեռացնելուն վերաբերող հարցերը։ Միւս պարագաներում քուէարկութեան ձևը կախւած է ներկայացուցչական ժողովի հայեցողութիւնից։

§ 40. Ներկայացուցչական ժողովը իր որոշումները ընդունում է ձայների սովորական մեծամասնութեամբ. ձայների հաւասարութեան դէպքում հարցերը համարւում է չլուծուած։ Միութիւնից անդամի արտաքսումը, վարչութեան, խորհրդի կամ վերատեսչիչ յանձնաժողովի անդամի հեռացնումը մինչև ժամանակամիջոցի լրանալը, պաշտօնավարութեան, կանոնադրութեան փոփոխումն և լրացումն ու Միութեան գործերի լուծման վերաբերող հարցերի որոշումը պէտք է ընդունուեն ոչ պակաս քան բոլոր ձայների $^2/_3$-ով։

§ 41. Ներկայացուցչական ժողովի արձանագրութիւնները արտագրւում են Ժողովի նախագահի, քարտուղարի, վարչութեան ներկայ գտնուող անդամների և ոչ պակաս քան երեք ներկայացուցիչների կողմից։ Եթէ ներկայացուցիչներից մէկը ժողովի որոշումը գտնում է հակառակ օրէնքի, կանոնադրութեան կամ, միութեան շահերին, այդ դէպքում նա իրաւունք ունի առնել իր առարկութիւնը և մտցնել տալ արձանագրութեան մէջ, որպէս առանձին կարծիք։

Բ) Խորհուրդը

§ 42. Կարիք հարցերը քննելու ու լուծելու համար, գոյութիւն ունի խորհուրդ, որի կազմը և գործունէութիւնը որոշւում է հետևեալ պայմանների։

1. Խորհուրդը բաղկացած է շրջանների մէկական ներկայացուցիչներից,

որոնք ընտրւում են շրջանների սպառողական կօօպերատիւների կողմից մէկ տարի ժամանակով։

Յանօրուրիւն I.—Շրջանները որոշում են ներկայացուցչական ժողովի կողմից։

Յանօրուրիւն II. Իւրաքանչիւր անդամ իր շրջանից ունենում է իր անձնափոխանորդը։

2. Խորհուրդը տալիս է իր եզրակացութիւնը վարչութեան յարուցած հարցերի մասին այդ դէպքում, երբ այդ հարցերի կարևորութիւնը ստիպում է վարչութեան դիմելու խորհրդի հեղինակութեանը։

3. Վարչութեան և խորհրդի խառն նիստերը գումարւում է վարչութեան կամ խորհրդի դիւանի հրաւէրով։

4. Խորհրդի և վերատեսչիչ յանձնաժողովի խառն նիստերը ղեկավարում է խորհրդի դիւանը։

5. Խորհրդի և վերատեսչիչ յանձնաժողովի խառն նիստերում վերաքննւում և հաստատւում են, ինչպէս խորհրդի, նոյնպէս և յանձնաժողովի բոլոր վերատեսչական և վերաքննական գործունէութեան ծրագիրները։

6. Խորհրդի անդամները և նրանց անձնափոխանորդները չեն կարող տեսչական գործողութիւնների մէջ մտնել միութեան հետ և առհասարակ անել այն ապրանքներով, որ միութիւնը վաճառում է իր անդամներին կամ ընդունում է վաճառելու համար։

7. Խորհրդի անդամը և անձնափոխանորդը չեն կարող լինել ագենտները, որոնք միմիանց հետ, նոյնպէս և վարչութեան անդամների հետ, բարեկամական կապերով են կապած կամ իրաւական են մինչև չորրորդ աստիճանը։

8. Առաջին երկու տարիներում Խորհուրդի կողմից միմիայն հեռանում է ոչ պակաս մի երրորդը ամբողջ կազմի և նրանց անձնափոխանորդների, իսկ հետևեալ տարիներում—ընտրութեան աւագութեան կարգով։

Յանօրուրիւն.—Խորհրդի հեռացած անդամները և անձնափոխանորդները նորից կարող են վերընտրուել նոր ժամանակամիջոցով։

9. Խորհրդի անդամները և նրանց անձնափոխանորդները կարող են հեռացնուել պաշտօնից՝ Խորհրդի $^2/_3$ ձայների մեծամասնութեամբ կայացած որոշումով։ Վերջնական որոշումը վերապահւում է շրջանի ժողովին։

10. Խորհրդի կազմից սրն է անդամի հեռանալու դէպքում, նրա տեղը բռնում է նոյն շրջանի ընտրած անձնափոխանորդը, ըստ որում մօտակայ ներկայացուցչական ժողովում ընտրւում է նոր անձնափոխանորդ այդ շրջանից։

11. Խորհրդի անդամը յարգելի պատճառներից ստիպուած կարող է տալ լիազօրութիւն իր շրջանից ընտրուած անձնափոխանորդին, որոշ ժամանակով կամ խորհրդի մի նիստի համար, բայց գրաւոր յայտարարութեամբ ուղղած Խորհրդին և անձնափոխանորդին։

12. Խորհուրդը հետևում է, որպէսզի վարչութեան կողմից գործադրուեն կանոնադրութիւնը, օրէնքները, ներկայացուցչական ժողովների պարտադիր

կանոնադրութիւնները, սահմանած կանոնները, օրինաւոր վճիռները, նոյնպէս հսկում է դրամագլուխների, փաստաթղթերի և կայքի ամբողջութեան վրայ, որոնք պատկանում են Միութեանը, կամ ժամանակաւորապէս վստահացած են նրան, որոշում է կայացնում Միութեան անդամի արտաքսման, Միութեան նախահաշուից դուրս արտակարգ ծախքերի վերաբերեալ, այդ իսկ պատճառով Խորհրդի առաջ բաց պէտք է լինեն Միութեան դրամարկղը, պահեստները, ձեռնարկութիւնները, ամբողջ հաշուապահութիւնը ու գործավարութիւնը։

13. Խորհուրդի անդամները իրենց միջից ընտրում են դիւանը։

14. Խորհուրդի դիւանը հետևում է շտապ գործերի իր ժամանակին քննելուն և Խորհրդի գործավարութեանը։

15. Խորհրդի նիստերի ժամանակը նշանակւում է Խորհրդի կամ դիւանի կարգադրութեամբ։

Մեկնաբութիւն.—Խորհուրդի նիստերը օրինաւոր են համարւում, եթէ ներկայ են անդամներից $^1/_3$ ոչ պակաս։

16. Խորհուրդի ժողովներում բոլոր անձնափոխանորդները կարող են մասնակցել միմիայն խորհրդակցական ձայնի իրաւունքով։

17. Միութեան գործունէութիւնը այս կամ այն ասպարէզում առանձին ստուգողական գործողութիւնների ենթարկելու համար, Խորհուրդը կարող է իր անդամների միջից ընտրել յանձնաժողովներ։

18. Խորհուրդի գործավարութիւնը յանձնւում է նրա կարգադրութեամբ Միութեան ծառայողներից որև է մէկին և տարւում է Խորհրդի դիւանի հսկողութեամբ։

19. Խորհուրդը հաշիւ է ներկայացնում ներկայացուցչական հերթական ժողովին հաշուական տարւայ իր գործունէութեան մասին։

20. Խորհուրդի իւրաքանչիւր անդամը պատասխանատու է Խորհուրդի առաջ իր այն գործողութիւնների համար, որոնք կխախտեն Միութեան շահերը։

Գ) Վարչութիւն

§ 43. Վարչութիւնը կառավարում է Միութեան բոլոր գործերը և ներկայացնում է Միութիւնը նրա բոլոր գործերում, պայմանագրութիւններում և անձնաւորութիւնների ու հիմնարկութիւնների հետ տեղի ունեցող յարաբերութիւնների մէջ առանց դրա համար յատուկ հաւատարմագրի։

§ 44. Մասնաւորապէս վարչութեան պարտականութիւնն է.

ա) Ապրանքների գնումը, վաճառումը ու պահումը և առհասարակ Միութեանց բոլոր գործառնութիւնների կիրառումը։

բ) Դրամի ընդունումն ու վճարումն, տոկոսաբեր թղթերի գնումը ու վաճառումը Միութեան պատկանող և նրան պահ ուած դրամների, արժէքների և կայքի պահպանումը։

գ) Մուրհակների, նոյնպէս և այլ ժամանակաւոր պարտաւորագրութիւնների տալը, ընդունելն ու շահելը ներկայացուցչական ժողովի որոշումների սահմաններում։

դ) Միութեան անունից ամեն տեսակի պայմանագրութիւնների և պայմանների կնքումը։

ե) Անշարժ կայք ձեռք բերելու, օտարացնելու և վարձելու մասին վաւերագրերի կազմումը։

զ) Միութեան շահերի պաշտպանութիւնը դատաստանական և վարչական հիմնարկութիւններում։

է) Միութեան գործավարութիւնը և հաշուեւութիւնը։

ը) Եկամուտի և ծախսերի նախահաշիւ, գործողութիւնների նախագծի, տարւայ հաշուեւութեան և հաշուեկշռի կազմումը և նրանց մատնումը ներկայացուցչական ժողով։

թ) Առանձին յանձնաժողովների կազմումը այն դէպքերում, երբ այդ իրաւունքը վարչութեանն է վերապահուած ներկայացուցչական ժողովի կողմից։

ժ) Միութեան պաշտօնեաների հրաւիրումը, վարձումը ու նրանց հեռացումը այն սահմանափակումներով, որոնք հաստատուած կլինեն ներկայացուցչական ժողովի կողմից։

ժա) Միութեան ծառայութեան մէջ ընդունուած պաշտօնեաներին հաւատարմագրեր տալը։

ժբ) Միութեան անդամների բաժնեվճարների ցուցակագրումը, ցոյց տալով նրանց պատասխանատուութեան չափը Միութեան պարտաւորագրութիւնների նկատմամբ։

ժգ) Ներկայացուցչական ժողովի որոշումներից և կանոնադրութիւնից բղխող այլ և այլ գործերի վարումը։

§ 45. Վարչութիւնը բաղկացած է ոչ պակաս քան երեք անդամից, որոնք ընտրւում են երեք տարի ժամանակով, գաղտնի քուէարկութեամբ ներկայացուցչական ժողովում Միութեան անդամ կօոպերատիւների անդամների թւից. նոցա համար ընտրւում են նոյն կարգով, ոչ պակաս քան երեք անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են վարչութեան բացակայող կամ դուրս եկած անդամներին, նրանց ընտրական ձայների առաւելական կարգով։ Վարչութեան անդամի պաշտօնը վարելու ժամանակ, թեկնածուն օգտւում է այդ պաշտօնին յատուկ բոլոր իրաւունքներով ու արտօնութիւններով։

Մեկնաբութիւն.—Վարչութեան անդամների թիւը որոշում է ներկայացուցչական ժողովի կողմից, նայած Միութեան գործողութիւններին։

§ 46. Միութիւնը հիմնելուց յետոյ ընտրուած վարչութեան անդամների մի երրորդ մասը հեռանում է իւրաքանչիւր տարի. առաջին երկու տարիները վիճակով, յետագայում՝ ըստ ընտրական աւագութեան.

Մեկնաբութիւն.—Վարչութիւնից հեռացող անդամը կարող է նորից ընտրուել։

§ 47. Վարչութեան, ինչպէս և Խորհուրդի ու վերաստուգիչ յանձնաժողովի (§§ 42, 45 և 56) կազմերի մէջ չեն կարող մտնել այնպիսի անձինք, որոնք Միութեան պէս միատեսակ առևտրական և արդիւնաբերական գործ ունին։

§ 48. Վարչութիւնը բաժանում է իր անդամների մէջ պարտականութիւնները։

§ 49. Վարչութեան նիստերը կայացուած են համարում, երբ ներկայ է գտնւում վարչութեան անդամների ոչ պակաս քան կէսը։

Ծանօթութիւն.—Վարչութեան նիստերին կարող են ներկայ գտնուել առանց վճռական ձայնի իրաւունքի, վարչութեան փոխանդամները, Խորհրդի և վերատուչիչ յանձնաժողովի անդամները, նոյնպէս և վարչութեան կողմից հրաւիրուած տեղեակ անձնաւորութիւններ։

§ 50. Վարչութեան մէջ բոլոր հարցերը որոշում են ձայների սովորական մեծամասնութեամբ, ձայների հաւասարութեան դէպքում հարցը համարում է չլուծուած։ Վարչութեան որոշումներն արձանագրւում են մատեանի մէջ և ստորագրւում ներկայ եղող անդամների կողմից։

§ 51. Մուրհակները, հաւատարմագրերը, պայմանաւորումները, պայմանները, կալուածագրերը և այլ վաւերագրերը, նոյնպէս և վարկային հաստատութիւններից Միութեան ստանալիք գումարների պահանջները, պէտք է ստորագրեն վարչութեան ոչ պակաս երկու անդամների կողմից։

§ 52. Վարչութեան անդամները իրանց պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանալուց առաջ կարող են հեռացուել պարտականութիւնների կատարումից՝ ներկայացուցչական ժողովի գաղտնի քուէարկութեամբ։

§ 53. Կանոնադրութեան, նոյնպէս և ներկայացուցչական ժողովի որոշումների խախտման դէպքում՝ վարչութեան անդամները պատասխանատու են Միութեան առաջ օրէնքի հիման վրայ, այն ՁԱՆների համար, որոնք հետևանք կլինեն նրանց գործողութիւնների։

V. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

§ 54. Միութեան վարչական մարմինների գործունէութեանը հսկելու, նրա գործերը քննելու և հաշուետուութիւնը ստուգելու համար իւրաքանչիւր տարի ներկայացուցչական ժողովի կողմից ընտրւում է վերատուչիչ յանձնաժողով։

§ 55. Վերատուչիչ յանձնաժողովը բաղկացած է ոչ պակաս, քան երեք անդամից, երեք փոխանդամներով, ընտրւած մի տարի ժամանակամիջոցով և գաղտնի քուէարկութեամբ, Միութեան անդամագրուած կօօպերատիւների անդամներից, որոնք չեն պատկանում վարչութեան և խորհրդի կազմին։

Ծանօթութիւն.—Վերատուչիչ յանձնաժողովի անդամների և նրանց փոխանդամների թիւը որոշում է ներկայացուցչական ժողովը։

§ 56. Վարչութեան անդամների պատասխանատուութեան, վարձատրութեան, գործողութիւնների կարգին և կազմին վերաբերող կանոնադրութեան յօդուածները (§§ 47—50 և 52) կիրառւում են և վերատուչիչ յանձնաժողովի անդամների վերաբերմամբ։

§ 57. Մասնաւորապէս վերատուչիչ յանձնաժողովի վրայ է ընկնում ա) Միութեան կանխիկ դրամների, տոկոսաբեր թղթերի և այլ արժէքների

պարբերական ստուգումն ու նրանց համեմատական բաղդատութիւնը հաշիների և մատեանների հետ։

բ) Միութեան հիմնարկութիւններում գտնւող պատրաստի ապրանքների ստուգումը և որոշումը, թէ որքան է համապատասխանում այդ մատեաններին, Միութեան կամ նրանց յանձնուած ամեն տեսակ կայքի ստուգումը և այդ բոլորը այն ժամանակամիջոցում, որ հնարաւոր ներկայացուցչական ժողովը կամ հարկաւորութեան դէպքում յանձնաժողովի հայեցողութեամբ։

գ) Վարչութեան դէմ եղած գանգատների քննութիւնը։

դ) Վաւերաթղթերի, մատեանների և հաշուետուութիւնների ստուգումը ու ներկայացնումը ներկայացուցչական ժողովին իր եզրակացութիւնների հետ թէ տարեկան հաշուետուութեան նախահաշուի ու գործողութիւնների նախագծի վերաբերեալ և թէ տարւայ ընթացքում Միութեան կատարած գործողութիւնների ստուգման մասին։

§ 58. Վերատուչիչ յանձնաժողովը գումարւում է ըստ չափու անհրաժեշտութեան։ Յանձնաժողովը ստուգման գործողութիւնները կարող է յանձնարարել իր առանձին անդամներին։ Վերատուչիչ յանձնաժողովը իր բոլոր գործողութիւնների մասին արձանագրում է առանձին մատեանի մէջ։

§ 59. Հաշուապահութեան դրամարկղի և միւս գործերի ստուգումով պարզած թերութիւնների ատիթով վերատուչիչ յանձնաժողովը ցուցմունքներ է տալիս վարչութեան, նրա թոյլ տուած սխալ կամ Միութեան չահերին անհամապատասխան գործողութիւնների մասին։ Միութեան գործերում աւելի էական անկարգութիւններ կամ զեղծումներ պարզելու դէպքում վերատուչիչ յանձնաժողովը հրաւիրում է ներկայացուցիչների արտակարգ ժողով (§ 32)։

§ 60. Վերատուչիչ յանձնաժողովի դէմ եղած գանգատները ներկայացնում են ներկայացուցչական ժողովին, բայց ոչ այլ կերպ քան յանձնաժողովի միջոցով, որ պարտաւոր է ներկայացնել այդ մօտակայ ժողովին իր բացատրութիւններով հանդերձ։

§ 61. Միութեան մարմինների հետ կապուած հսկողութեան ու քննութեան պարտականութիւնները կատարելու ժամանակ քննութեան ենթարկուող վարչութիւնը և Խորհուրդը պէտք է աջակցեն վերատուչիչ յանձնաժողովին, բաց անեն նրա առաջ հաշիւները ու մատեանները և թոյլ տան ծանօթանալ Միութեան բոլոր գործերին ու հիմնարկութիւններին։

VI. ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ Ե ՀԱՇԻԵՏՒՈՒԹԻՒՆ

§ 62. Միութիւնը պարտաւորեցուցիչ կերպով պահում է մատեաններ, որոնց մէջ մտնում են՝

ա) Միութեան բոլոր շրջանառութիւնների վերաբերեալ ընդհանուր մուտքը ու ելքը։

բ) Միութեան շրջանառութիւնների իւրաքանչիւր տեսակի համար առանձին մուտքի ու ելքի հաշիւ։

գ) Միութեան հաշիւներն առանձին իւրաքանչիւր անձնաւորութեան և հիմնարկութիւնների հետ։

§ 63. Իւրաքանչիւր փակված տարեայ վերաբերեալ՝ վարչութեան կողմից կազմւում է ներկայացուցիչների տարեկան ժողովի քննութեան ու հաստատման ներկայացնելու համար տարեայ մանրամասն հաշուետուութիւնը Միութեան գործողութիւնների և նրա շրջանառութիւնների, հաշուեկշռի ու գործողութիւնների նախագծի մասին։

§ 64. Միութեան հաշուետուութեան տարին համարւում է յունուարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը։

§ 65 Հաշուետուութիւնը իր մանրամասն մեկնութեան մէջ պէտք է պարունակէ հետևեալ գլխաւոր յօդուածները՝ 1) գանձարանի հաշիւը, 2) գոյքի և անշարժ կայքի հաշիւը, 3) դրամագլխի հաշիւը հիմնական բաժնային և այլն, 4) զանազան անձնաւորութիւնների, Միութեան պարտքերի և Միութիւնից զանազան հիմնարկութիւններին հասանելիք պարտքերի հաշիւը. 5) Միութեան գործերի համար կատարած ծախսերի հաշիւը. 6) օգուտների և վնասների հաշիւը, 7) վերջնական հաշուեկշռի հաշիւը և 8) մաքուր օգուտն ու նրա օրինակելի զատաւորումը։

§ 66. Հաշուետուութիւնը պէտք է կազմւի ոչ ուշ, քան յաջորդ տարեայ մայիսի 1-ը և տարադրւած պիտի լինի վարչութեան և վերատեսուչ յանձնաժողովի կողմից։ Այս գործողութիւնները պիտի կատարւեն առնւազն հերթական ներկայացուցչական ժողովի գումարումից երկու շաբաթ առաջ։ Այդ երկու շաբաթեայ ընթացքում մատեանները և վաւերագրերը վարչութեան գրասենեակում որոշ ժամեր պէտք է տրամադրւեն ներկայացուցիչների հայեցողութեան։

VII. ՕԳՈՒՏՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 67. Մաքուր օգուտը, դուրս հանած դրանից ոչ պակաս, քան 20% պահեստի և ոչ պակաս, քան 10% սեփական հիմնական դրամագլուխների աճեցման համար, ներկայացուցիչների կողմից բաժանւում է ա) անդամներին, իբրև սպառողական օգուտ և բ) յատկացնւում է ներկայ կանոնադրութիւնից բղխող միւս նպատակներին ընդհանրապէս և յատուկ ֆօնդեր ստեղծելով։ Սպառողական օգուտի չափը որոշում է ներկայացուցչական ժողովի կողմից։

§ 68. Միութեան անդամի սպառողական չահը տրւում է հաշուետուութիւնը հաստատելուց յետոյ երեք ամսեայ ընթացքում։

Ծանօթութիւն.— Ներկայացուցչական ժողովը կարող է որոշում կայացնել յատկացնելու օգուտը միութեան անդամների փայերի վճարներին, չյանձնելով նրանց ձեռք. բացառութեամբ այն դէպքերի, որոնք ցոյց են տրւած § 19-ում։

§ 69. Միութեան շրջանառութիւնների վերաբերեալ առաջացած վնասը ծածկւում է պահեստի և հիմնական դրամագլխից։ Եթէ այդ միջոցով վնասը չը ծածկւի, ներկայացուցչական ժողովը պակասող գումարը պէտք է բաժանի միութեան և նրա անդամների մէջ պարտաւորեցուցիչ փայերի վճարների գումարի համաչափութեամբ (§ 12), վճարման ժամանակամիջոց նշանակելով

ոչ ուշ քան տարեայ վերջը։ Չվճարելու դէպքում վարչութիւնը պահանջում է չվճարող անդամից հասանելիք գումարը կամ նրան պատկանող գումարով ծածկում է վեր յիշած բաժանումից այդ անդամին բաժին ընկած գումարը։

VIII. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

§ 70. Միութիւնը լուծման է ենթարկւում՝ ա) ներկայացուցչական ժողովի որոշմամբ, բ) եթէ միութեան կազմի մէջ կլինեն երեքից պակաս անդամներ և գ) սնանկութեան դէպքում։

§ 71. Միութեան լուծման հարցը առաջ դալու պարագաներում վարչութիւնը պարտաւոր է անմիջապէս գումարել ներկայացուցչական ժողով, որը որոշում է կայացնում միութեան լուծման (լիկվիդացիայի) վերաբերեալ կամ միջոցներ է ձեռնարկում վերացնելու այն պայմանները, որոնք առաջ են բերում լուծումը։

§ 72. Միութեան լուծման համար պահանջւում է, որ այդ մասին եղած որոշումը հաստատւի երկրորդ անգամ նոյն նպատակով գումարւած ներկայացուցչական ժողովի կողմից ոչ շուտ քան մի ամսից յետոյ և ոչ ուշ քան առաջին որոշումից մի տարի յետոյ, այն էլ ոչ պակաս քան ձայների $^2/_3$-ի մասով։

§ 73. Միութեան լուծման հարցի մասին (§ § 71 72) ներկայացուցչական ժողովի կայացրած որոշումը յայտնւում է շրջանային դատարանին և յայտարարւում տեղական լրագիրներից մէկում։

§ 74. Միութեան լուծման դէպքում § 70 ա. և բ. կէտերի հիման վրայ լուծումը կատարւում է վարչութեան կողմից, եթէ ներկայացուցչական ժողովը չի յանձնարարի այդ աշխատանքը յատկապէս ընտրւած՝ ոչ պակաս քան երեք անդամից բաղկացած լուծողների մարմնին։

§ 75. Լուծողները ենթարկւում են վարչութեան անդամների համար հաստատւած ընդհանուր կանոններին, նոյն հիմքերով պատասխանատու են միութեան հասցրած վնասների համար ու նոյնպէս ենթարկւում են վերատեսուչ յանձնաժողովի հսկողութեան։

§ 76. Լուծողները հրաւիրում են միութեան պարտատէրերին յայտարարութեան և հրաւիրագրի միջոցով, միջոցներ են ձեռք առնում նրանց բաւարարելու, վաճառում են միութեան կայքը ու մտնում համաձայնութեան մէջ և հաշուեցուցիչ պայմանագրութիւններ կազմում երրորդ անձնաւորութիւնների հետ այն հիմքերով ու սահմաններում, որոնք ցոյց կտրւեն ներկայացուցչական ժողովի կողմից։

§ 77. Միութեան բոլոր պարտաւորագրութիւնները ծածկելու համար, եթէ նրա կայքը եղաւ պակաս, լուծողները գործում են համաձայն միութեան սնանկութեան պարագայում նրա անդամների պատասխանատուութեանը վերաբերող օրէնքի յօդուածների («կօօպերատիւ ընկերութիւնների և նրանց միութիւնների կանոնադրութեան» յ. յ. 49—51)։

§ 78. Միութեան անդամներին բաժին ընկած վնասները դուրս հանելով նրանց փայերից, մնացորդը կարող է վերադարձւել միութեան պարտքերը ծածկելուց և լուծողների հաշուետուութիւնը ներկայացուցչական ժողովի կողմից

հաստատելուց յետոյ, սակայն յամենայն դէպս, ոչ չուտ քան մի տարուց յետոյ, հաշուած այն օրից, երբ յայտարարուած է լուծման մասին։

§ 79. Միութեան պարտքերը վճարելուց և անդամների փայերը վերադարձնելուց յետոյ, մնացած կայքը գործադրւում է կօօպերատիւ և այլ հանրօգուտ նպատակներով՝ ներկայացուցիչների լուծող ժողովի որոշմամբ։

§ 80. Լուծումը վերջացնելով, լուծողները կազմում են իրենց գործունէութիւնների մասին հաշուետուութիւն, որը ներկայացնում են վերատուգիչ յանձնաժողովի եզրակացութիւններով հանդերձ ներկայացուցչական ժողովի հաստատման։ Լուծման հաշուետուութիւնը հաստատելուց յետոյ այդ մասին յայտնւում է շրջանային դատարանին՝ կօօպերատիւ ընկերութիւնների մատեանի մէջ համապատասխան արձանագրութիւն կազմելու համար և «Սենատի յայտարարութիւնների» մէջ ծանուցելու նպատակով։

Լուծողները Միութեան մատեանները, գործերը և վաւերաթղթերն՝ յանձնում են շրջանային դատարանին, որը և պահում է տասը տարուայ ընթացքում, թոյլատրելով Միութեան նախկին անդամներին և նրա պարտատէրերին ծանօթանալ նրանց բովանդակութեան հետ, տալով պատճէններ, քաղուածքներ ու տեղեկութիւններ։

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0043589

«ԱՆՄԻԹԻՆԻ ՁԱՅՆ Է»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՍՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄԵԿՈՒՆՉԻՆ ՕՐԳԱՆ

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՊԵՐԱՏԻՎ“

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տարեկան — 100 բուրլի, վեց ամիսը — 60 բուրլի և հանդ 10 բուրլի ամեն տեղ։

Արտասահմանում — կրկնակի։

Հրատարակ. Երևան. Խմբագրության և «Հայաստանի Կոոպերացիայի»-ի